Շահերի բախման կանխարգելմանն ուղղված քաղաքականություն

Արժեթղթերի շուկայում գործարքներ իրականացնելիս Բանկը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Հաճախորդների պատվերները կատարելիս Բանկը գործում է ելնելով բացառապես հաճախորդի շահերի պաշտպանությունից: Շահերի բախման կանխարգելմանն են ուղղված Բանկի կողմից իրականացվող հետևյալ միջոցառումները.

Առաջնային շուկայում

Յուրաքանչյուր ներդրողի հնարավորություն է ընձեռվում Բանկի միջնորդությամբ ձեռք բերել պարտատոմսեր առաջնային շուկայում (եթե Բանկն ունի տվյալ դասի արժեթղթերի առաջնային տեղաբաշխմանը մասնակցելու իրավունք) ՀՀ կենտրոնական բանկում պարբերաբար անցկացվող փակ սակարկությունների ժամանակ, Բանկում հաճախորդի հաշվին անհրաժեշտ գումարի և գանձվող միջնորդավճարի դեպքում:

- Այն դեպքում, երբ հաճախորդները (ներդրողները) առաջնային շուկայից պարտատոմսերի ձեռքբերման հայտ են ներկայացնում միևնույն գնով, և հայտը բավարարվում է մասնակիորեն, Բանկը բավարարում է հաճախորդների հայտերը համամասնորեն,
- Այն դեպքում, երբ Բանկը և ներդրողը առաջնային շուկայից պարտատոմսերի ձեռքբերման հայտ են ներկայացնում միևնույն գնով, և հայտը բավարարվում է մասնակիորեն, ապա Բանկն առաջնահերթ բավարարված է համարում ներդրողի հայտը:

Երկրորդային շուկայում

Գործարքներ կարող են իրականացվել երկրորդային ինչպես կարգավորված («ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ), այնպես էլ չկարգավորված շուկայում: Յուրաքանչյուր ներդրողի հնարավորություն է ընձեռվում Բանկի միջնորդությամբ ձեռք բերել կամ օտարել ցանկացած քանակությամբ պարտատոմս երկրորդային շուկայում:

- Ներդրողների հայտերը մուտքագրվում են բորսայի հարթակ ըստ ժամանակագրական սկզբունքի (ներդրողի ներկայացրած հայտում նշվում է հայտի ներկայացման ժամը):
- Տարբեր ներդրողներից նույն թողարկման պարտատոմսերի միևնույն գնով առքի և/կամ վաճառքի հայտերի ստացման դեպքում Բանկը կարող է հայտերը ներկայացնել մեկ հայտի տեսքով և գործարքի կատարման դեպքում հայտերը բավարարված են համարվում ժամանակագրական սկզբունքի համաձայն:
- Եթե Բանկը իր և ներդրողի անունից բորսայում հայտ է ներկայացրել միևնույն գնով, ապա հայտի բավարարման դեպքում առաջնահերթ բավարարված է համարվում ներդրողի հայտը:
- Եթե ընդունվում են հանդիպակաց հայտեր,
    - միևնույն կատարման գնով լիմիտային հայտերի դեպքում Բանկը գործարքը կատարում է կարգավորվող շուկայից դուրս նախապես այդ մասին տեղեկացնելով ներդրողներին:
    - շուկայական հայտերի դեպքում Բանկը դրանք մուտքագրում է բորսայի հարթակ ըստ ժամանակագրական սկզբունքի: